60. ՕՁՈՒ ԹԱԳԱՎՈՐ

Շատ խին ժամանակով կէլնի կէլնի մեյ պառավ կնիկ, որ վեր աստվորիս ունի մեյ խատ լաճ-տղա: Էտա պառավն ի, կնիկ հալովն շատ բան գեյտի: Ուր տղեն չթողնե պարապ, կուտա սանաթի, ինչ ի՝ որ տղենը իր մեռնելուց վերջ պատառ մի հաց ուտի, ուր խուգյուն օղորմի տա, չէլնի որ խեղճ էլնի:

Տղենը կէրթա սանահաթի. ինոր շաբաթ տասն փարա հաֆթալըղ կուտան, իտոր վերեն էլ ուրախ ի: Մեյ շաբաթ օր որ կառնի տասն փարեն, ուրուխ-ուրախ տուն կուգյա՝ ճամխի վերեն կտիսնա, որ լաճերը թափեր են վեր շանըմ, կզանեն, հա կզանեն խեղճ անասունին. էն տաս փարեն կուտա ինոնց, շունը կազատի, կբերի տուն, կկապի դռան իտև: Էն մեկել շաբաթ օրն էլ կառնի տաս փարեն, կուգյա, կտիսնա, որ թափեր են վեր կատվում, կչարչարեն. տաս փարեն կուտա ինոնց, կատուն կազատի, կբերի տուն, կթողնի մառան: Կմնա էն մեկել շաբաթ օր. կտիսնա որ էսա դրիս, ընկեր են մեկ ճլպլտուն օձու իտվիս, քյարով-փետով կլարատեն օձուն. կխասնի ինոնց վերեն, թե խաթրով, թե զոռով, տաս փարեն կուտա, օձն էլ կազատի, կբերի ուրենց տուն. ինոր սարմիեն կէլնի շունը, կատուն և սև օձը, իրեյք շաբթվա վաստակ:

Մերն ի, որ կտիսնա լաճու արարմունքը՝ շատ կնեղանա. - Քա տնավիրի լաճ, ասենյք թե շունը տուն կպահպանի, կատուն էլ մուկ կբռնի. ախըր օձը ի՞նչ բանի յարար ի:

- Մարե՛, մարե՛, մի նեղանա, զըմենն էլ մե լազըմ կուգյան, չյում խատած օձն էլ պետք կուգյա մարդու, - կասի:

Լաճը օձը կտանի կդնի տան վերին պատխան. շունը գաթի կապեր ի դռան իտև, կատունն էլ մառան:

Մեկ օր օձը շա՛տ-շա՛տ կկոկոռա: Աստծու խրամանքյով ինոր լեզու կէլնի, կասի. - Կտրիճ, լսիր ձիկ, իմ խերն ու· մերը թագավոր են օձերաց. ես ինոնց շատ սրտի սիրական աղջիկն եմ, ինոնց վերեն կորսվեր եմ. ձիկ կփտռեն: Զըմեն առավտուն կտիսնաս, որ մեկ պոլաստ,

կանաչ-կապուտ խաստ օձըմ օձերաց ջամով կնստի վեր ժեռ քյարերաց, կկռա, կկոկռա. շատ վայնասուն ձեն կխանի. չորս բոլոր կբռնեն օձերը, ինոյնք էլ ինոնց հետ կֆշֆշան. իմցիր որ իմ խեր մերն են, ձիկ խամար տյուսն են ընկե որ կնդնեն: Տյու յավաշըմ կմոտիկնաս ինոնց, կասես. «Օձ թագավոր, ես իմցես ձեր ցավն ի՞նչ ի. ձեր աղջիկն իմ մոտն ի, իմ տան պատխան»: Էն ժամանակ օձերը շատ կուրախնան, ինչ որ կուզես կուտան: Որ կասի օձու թագավորն. «Ուզի՛, քյո ուզածն ի՞նչ ի», տյու ասա. «Ոչինչ, քյո մատի մատնիկ տաս, ձիկ խերիք ի»: Էն կասի. «Վայ քյո սովրցուցողի վիզը փոթնի»: Տյու բան մի՛ ասե: Էն կուտա մատնիկ: Ա՛ռ, արե՛ ձիկ տար. էն մեյ մատնիկ մինակ քե բավական ի՝ քյանի որ կենով կենդանի ես:

Լաճն էլ օձու ասածին պես կանի. կէրթա կտիսնա որ օձերը իրենց թագավորու խետ լցվեր են ժեռ քյարի վրա: Իմաց կուտա օձու թագավորուն. կառնի մատնիկ, կուգյա տուն, կառնի օձու աղջիկը, կտանի օձերաց թասլիմ կանի:

Օձու մատնիկը լաճու համար կէլնի դաֆինա ասեմ, թե խազինա: Մատնիկ որ խանի տյուս՝ քյանճ արեգական փելս կուտա. մութ տեղ կփայլի էնպես՝ ինչպես խազարավոր ճրագներ վառես:

Մեկ օր մատնիկը կպաքի, կդնի վեր գյլխուն, հյուշտ ջուխտըմ արապ, սև-սպահի, կթոնեն, ուր առճև կկայնեն, ալփանջա ինոր ամրին կաչկեն, կասեն. «Շինե՞նյք թե ավիրենյք»: Կասի. «Հալա ո՛չ շինեյք, ոչ ավիրեյք. գնացեք ձեր տեղը հանգիստ արեյք, չյում իմ վախտ գյա, ես ձե կկանչեմ»:

Արապները գլուխ կուտան, կէրթան ուրենց տեղ:

Կմնա մեյ քանի օր. լաճը կասի մոր. - Մարե՛, գնա թագավուրու աղջիկը ուզի ձիկ կնիկ. ես կուզեմ ինոր խետ նշանվեմ:

Մերը որ կլսի՝ արմանյք-զարմանյք կէլնի, կասի. - Տղա՛, տյու ծու՞ռ իս, թե դիվանա. ես ի՞նչխ էսա ճաթոթ խալվներով էրթամ կայնեմ թագավորու դուռ. ախըր ես վո՞վ, տյու վո՞վ, թագավորը ի՞նչըխ մե աղջիկ կուտա. վով լսի, ի՞նչ կասի, մե ծաղր կանի:

- Չէ՛, մարե, տյու մի՛ վախենա, ինչ որ կասեմ՝ էն արա՛:

- Դե բեր ձիկ մեյ ձեռք լավ իմ ուզած խալավ, որ խայնեմ էրթամ:

Էն սհաթին լաճը որ մատնիկ կպաքի, կդնի վեր գյլխուն՝ ջուխտ արապ կկայնեն առճև: Ամր կանի, մոր ուզածներ բերեն: Էն սհաթին թե՛ մոր խամար լավ-լավ խալվներ, թե այբեմ էլ ոսկի կբերեն, կխագյուցեն մոր. մերը ճովռալեն կօղորկեն թագավուրու տուն, որ էրթա խարսնախոսութեն անի:

Մերը որ կէրթա թագավորու տուն՝ աջեն ձախեն ոսկի ի որ կցրվի. հըմենք զարմանյք կմնան: Կմտնի սարեն, դռղրի կէլնի վերին քյոշկ, թագավուրու մոտ, կասի. - Թագավորը ապրած կենա, իկեր եմ քյո մոտ խնդիրք անելու. քյո աղջիկը պիտի տաս իմ տղին, ես ու տյու խնամի պիտի դառնանյք:

Թագավորն էլ կշվարի, կասի. - Զո պառավ, էտա ի՞նչ կասես. կանա՞ս իմ հաղեն գյա. քյո տուն ու տեղ ըսկուն բարձր պիտի լինի, քյանձ իմ քյոշկ-սարեն ավելի. քյո բար ու բաղչեն ըսկուն պիտի շեն էլնի, քյանձ էրկնուց դրախտ, որ իմ աղջիկը մեջ կան գյա, հավուզներ պիտի, որ մեջը լոդա:

Պառավ հաստատ ջուղաբ կառնի թագավուրուց, կուգյա մոտ լաճ, կպատմի, ինչ որ թագավորը ուզեր ի ինորից:

Լաճն ի, պառվու ասածները որ կլսի՝ մատնիկ կպաքի, կդնի վեր գյլխուն: Արապները հազըր-նազըր են, կկայնեն դեմ: Ամր կանի կասի. «Զեզնից կուզեմ, որ չյում առավտուն ըսկուն քյոշկ ու սարեմ կայնըցուցեք, դրախտի պես բոստաններ, հավուզները մեջ, որ չթողնի արև առնի վեր թագավորու սարին. բարձր, էրկնուց հետ բարեմբար էլնի»:

Արապները գլուխ կուտան ու կերթան:

Արապները մեյ գիշերվա մեջ ըսկուն սարեմ կկայնուցեն, որ առավոտուն թագավոր իրիշկած ժամանակ, կտիսնա հեյրան կէլնի, դե կաց աչկի, որ արևու շող տիսնաս. ըսկուն քյոշկ-սարս ոչ մարդ ի տիսի, ոչ տեղմ էլ կա, չորս-խինգյ կադ իրարու վրա, խետ էրկնուց երեսին բարձր:

Թագավորը ուր մատը կկծի, կասի. «Պառավը տարավ իմ աղջիկ որ տարավ. էսասկընա հեքմաթի բան մարդ ո՛չ տիսե, ո՛չ լսե»:

Մեկել օրը պառավ կխայնի մի ուրիշ ձեռք արփշմե շորեր, բյություն վաբրուֆ կումաշիս, վերեն-գյլոխ փելս կուպար. կուգյա մոտ թագավոր կասի. - Թագավոր ապրած կենա, ի՞նչ կուզես էլ, մկա կուտա՞ս քյո աղջիկը:

- Կուզեմ որ ձեր դռնեն չյում իմ սարի դուռը էրկեն փողան էլնի: Էրկու կեչալի ծառնոց, վարդ-վարդենիս բոլորն էլնի: Էն խավքեյրաց ամենից լավն վեր ծառերաց, վեր վարդերաց նստի: Ձեր դռան առջև ապաղ աղբրի ակներ էլնին զուլալ ջրով: Աղբրի մեյ պոչից արծաթ թափի, մեյ պոչից ոսկի: Իմ սարից չյում ձեր դուռը խալի-խալիչա փռվի, որ իմ աղջիկ ինոնց վերեն քեյլի, գյա ձեր տուն:

Պառավը էսա կանդար բաները որ կլսի թագավուրուց՝ շատ ծանր կէրևա ուրան. փոր-փոշման, մալուլ-մռութ, գյլոխն առճև կախած մտմտալով կուգյա լաճու մուր. զըմեն կպատմի. չխավատա որ կէլնի:

- Մարե, տյու կասաֆաթ մի անե, - կասի լաճը, - աստված օղորմած ի, թագավուրու ասածից դհա առավելն անել կուտամ:

Մեկել օր մատնիկ կխանի, կպաքյի, կդնի վեր գյլխուն՝ արապները հյուշտ հազըր-նազըր կկայնեն առճև . - Ուզի՛, կտրիճ, ուզածդ ի՞նչ ի:

- Կուզեմ որ մեր դռնեն չյում սարի դուռ էրկեն փողան էլնի: Էրկու կեչալի ծառնոց, վարդ-վարդենիս էլնի: Խավքեյր վեր էն ծառերաց, վեր էն վարդերաց թառեն, ճվվան: Իմ դռան առճեվ աղբյուր, աղբրի մեյ պոզից ոսկի, մեյն արծաթ թափի: Իմ դռնից չյում թագավուրու դուռ խալի-խալիչա, ոսկի-արծաթ փռվի:

Լաճու խաբարը հալա բերան էր ուզածին պես կկատարվի, ըսկուն որ տեսնողի բերանը բաց կմնա. չգիտե ի՞նչ խելք խասուցի:

Առավոտուն թագավորը որ վեր կէլնի, կիրիշկի դեխ քյոշկն ու սարեն, դեխ լաճու բաղն ու բաղչեն, խավքեյրաց անուշ ձենը որ աշխարհ բոներ ի. կշվարի կմնա, ո՛չ ինքն ի տիսե էսասկընա շենյք-շենլիյկ, ոչ ուր խերը, և ոչ էլ ուր յոթ պապ: Կասի. «Ըստրուս ըստրուս պառավը մեր աղջիկը տարավ որ տարավ. խալալ էլնի իր տղին»:

Սոն-սոն թագավորը ինքն ուր կամքյով ջոտաբ կանի, խարսնիսի պատրաստութին տիսնան. էլ անպատմելի ի, անասելի էն թադբիրն, էն զար ու զարդարանք, որ կէլնի թե լաճու տուն, թե ադջկա տուն: Թագավորը շատ սուքյրով, շատ ձիավորներով, շատ խալաեղներով աղջիկը կողորկի պառվու լաճուն. լաճը կպսակվի:

Թագավորը չմոռնա, ուր արաբ սեյիսն կդնի խեստ աղջկան:

Կընցընի մի քյանի ամիս: Արաբ սեյիսի խոսքը խեստ աղջկան մեկ կէլնի. կասի. «Տյու ի՞նչխ կնիկ ես, որ չյում մկա չես իմցե քյոր իրկան ֆելն ու ֆալարյաթ, որ մեյ գիշերվա մեջ էսասկընա մեծ-մեծ բաներ, դաբդաբեր կայնընցուց, առանց մարդ-ադամորդու»: Թագավորու աղջիկ ուր սեյիսի խաբրին ականջ կանի, շատ կմտնի իրկան խելք, խաբար կպորպրի, օրը մեյ միանա կանի, չյում յավաշ-յավաշ իրկան մոտեն խաբար կքաշի, կիմնա ինոր եղելութեն: Իրիկ շատ միամիտ կէլնի. կասի, որ. «Ըմեն մարիֆաթ էսա իմ մատնիկն ի, ինչ որ անեմ՝ իսորով կանեմ»: Մատնիկն էլ նշանց կուտա: Կնիկը կատատորի, կատատորի, չյում մեյ գիշեր ռաստ կբերի, իրկան մատնից մատնիկ կխանի, կուտա ուր սեյիս արաբաղուն:

Արաբ սեյիս մատնիկն առնելուն պես՝ կպաքի կդնի վեր գյլխին թե չէ՝ հյուշտ ջուխտ սև արաբ տյուս կուգյան կկայնեն: Սեյիսն ամր կանի, կասի. «Ձեզնից կուզեմ, որ էսա քյոշկ ու սարեն ուր թարթախլմով վերուցեք, տանեյք Չինու քյաղաքը, պառավն ուր տղեն էլըմ մնան ուրենց խին հալին, իրենց պգլոզ տնովն ու տեղով»:

Ասելուն պես՝ քյոշկ ու սարեն կվերցվի Չինու քյաղքի օրթեն: Առավոտուն պառավն ու լաճը իրենց կտիսնան էլմ իրենց խին տների մեջ: Շատ կուլան, շատ կմոմուան. ճարը չէլնե. արաբ սեյիսն ուր արածն արեց: Շուն ու կատուն որ կլսեն ինոնց վայնասուն լացն ու աղաղակ՝ կխասնեն ինոնց հավարին. սիրտ կուտան. կասաֆաթ մի՛ անեք, կասեն:

Իրենյք երկուսը, շունն ու կատուն, խելք խելքի կուտան, կինեն ճամբախ, կերթան ծովու ադուկ, շունը կատվուն կշլկի, ծովը կանցնեն, կէլնեն տյուս մեկել ադուկ: Կտիսնան որ ադեկ-ադեկ մկներ արձակ-համարձակ մեջ փողանոներաց դաշտերաց կֆոֆռան. ինոնց որ կտիսնան՝ կփախնեն: Կատուն կասի - Մկներ, մի փախնեյք, ես ձե բան չեմ անե, որ խոսքս կատարեյք: Կանա՞ք սե արաբ սեյիսի լեզվի տկիս մեր աղի մատնիկը բերեյք:

Մկները խոսք կուտան ինոնց, կժողովին մեյտեղ, պոչները կթաթխեն

մեջ քյայխին, կփանեն կթաթխեն մեջ ալըրին, որ կխճեն սեյիս արապու քիյթ՝ սև արապ ըսկուն կփոշփա, որ մափնիկը լեզվի փկից փյուս կթռնի: Շուն ու կափուն վերեն կխասնեն: Շունը մափնիկ կդնի ուր լեզվի փակ, կափվին էլ կդնի վեր ուր քամկին, վազեվազ կինեն ճամբախ, կխասնեն ծովու պռուկ: Կափուն շւսն շափ կաղաչի, որ մափնիկ փա մոփ ինքը. չէլնի իսկի ծովու մեջ, ամմա շուն ականջ չանե: Կմփնեն ծով:

Ծովու կես փեղ մեյ խւսփ ճոչ ձուկ ռասփ կուգյա. շունը կանի որ ինոր բռնի, բերնից մափնիկ կինի, ձուկը համւսն կխասնի, կուլ կուփա: Հեյվա՞խ-հեյվախ, էլ նա՞ մյուքյուն. գնայ մափնիկ որ գնա՞y: Ի՞նչ անեն, ի՞նչ չանեն. կէրթան ծովուց փյուս կէլնեն, կփիսնան որ սյառավն ու լաճ նսփեր են ինոնց ճամբախ կաչկեն:

Շունը էսա հանցանք կթալի վեր կւսփվուն, կափունը՝ վեր շան: Ի՞նչ անեն, ինչ չանեն. լաճը թոռ կթալի ծով: Ասփծու խրամանքյով ձուկը կինի մեջ. կխանի, ինոր փորը կճղի, մափնիկը փյուս կուգյա. ա՞յ քե խրաշք, որ ւսսփված կաջողի ինոնց: Ուրախ-ուրախ կառնեն կուզյան փուն, մարդու չեն ասե: Մութը որ կինի, զըմեն մարդ կմփնի ուր փուն, կմփնի Աղամւս քյուն՝* լաճը առաջվա պես կպաքի մափնիկ, կդնի վեր գյլխուն: Ջուխփ արւսպ ալփանջւս կկայնեն ինոր առջև, գյլոխ կուփան լւսճուն, հւսզըր-նազըր ինոր ամրին կիրիշկեն:

- Հւս՛յ բեբախփներ, փյուք էսւս կանդար ժամանակ ու՞ր իք գնայե:

- Աստ՛, քյո ամր դյոր էլնի՝ մենյք էնփեղ ենք, - ասին արապները:

- Ձեզնից կուզեմ, էլմ՚էլ առաջվւս ւսես իմ պուն իմ փեղ, են քյոշկն ու սարեն իրենց թար-թախըմովն, թագավուրու աղջիկ մեջը նսփած, սեյիս արապն էլ նորա մոփ կայնւսծ:

Ասելն ու կափարվելը. մեյ կէլնի, էլմ էն քյոշկն ու սարեն, էլմ էն բւսրն ու բաղչեն, էլմ էն թւսրն ու թւսխըմ, խալին ու խալիչեն, ոսկին ու ւսրծաթ, աղբրներ, վարդն ու վւսրդենիս զըմենը փեղն ու փեղ: Խւսբար կանի աղջկւս խոր. էն թւսգավուրուն կկանչի ուր փուն. նշանց կուփա որ էն իմեն չարութեն սեյիս արապուցն էր, որ ւսղջկան խելքն ու միփք գողյեր էր, խաբեր էր, որ առներ ուրեն խամար կնիկ աներ. ւսմմա ասփված փվեց որ ըփըսկնա ինոր չար խորհուրդ չկապարվեց, չխասավ չար մուրազին:

Մեկ էլ փիսնաս, որ թագւսվուրու ամրով սեյիս արապը կիմա-կիմա կանեն, ջալափները կիւսսնեն վերեն, քյո ուզածի պես ճոչ պրփուճն ականջ կթողնեն, կթւսլեն շներաց:

Օձու թագավորը կկնդնի ուր կորուսած օձու ձագը. իսոնք էլ, պւսռավն ու փղեն, թե աղքափ ին, կզանկընման: Նոր օր, նոր փարի, նոր օյին, նոր-բւսրին կուգյա ինոնց վերեն, նորից թւսզադան յոթն օր գիշեր ու ցերեկ խարսնիս կանեն, կխասնեն իրենց սրփի մուրազին:

Տյուք էլ խասնեյք ձեր մուրազին**:

* Աղւսմա քուն ասելով ժողովուրդը հասկանում է այն թմրությունը, որ աստված ձգել է Ադամի վրա. Եվային նրա կողքից ստեղծելու ժամանակ (Ծ.Բ.):

** Այս վերջին խոսքը խիստ բավականություն է փալիս երիտասարդ ունկնդիրներին (Ծ.Բ.):